ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> մարտի 2013թվականի N 31-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ, ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ, ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով <<Գյումրին 2013թվականի ԱՊՀ մշակութային մայրաքաղաք>> ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումները անցկացնելու ժամանակ բազմաթիվ հյուրերին Գյումրի քաղաքը ոչ միայն որպես մշակութային ավանդույթներ կրող այլ նաև մաքուր, բարեկարգ քաղաք ներկայացնելու անհրաժեշտությունից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ, 19.1-րդ կետերով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 20-րդ և 21-րդ հոդվածների դրույթներով, <<Թափոնների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 20-րդ, 25-րդ հոդվածների դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հանձնարարել՝ քաղաքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահանության բաժնի պետ Կ.Մանասյանին՝

1) համաքաղաքային շաբաթօրյակները պատշաճ կերպով անցկացնելու նպատակով՝ մինչև սույն թվականի մարտի 25-ը կազմել և համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել քաղաքի աղբահանության, սանիտարական մաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների կազմակերպման և անցկացման ծրագիր-ժամանակացույց,

2) համապատասխան տարածքներում գտնվող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, բնակիչների շրջանում կազմակերպել և իրականացնել ակտիվ բացատրական աշխատանք՝ իրենց ենթակայության տակ գործող օբյեկտներին հարող տարածքների, փողոցների, բակերի աղբահանության, սանիտարական մաքրման, բարեկարգման և կանաչապատման նպատակով համաքաղաքային շաբաթօրյակների կազմակերպման անհրաժեշտության վերաբերյալ.

Այդ նպատակով՝

ա. նրանց տրամադրել պահանջվող գործիքներ (բահեր, ավելներ, տրանսպորտային միջոցներ՝ հավաքված և կուտակված աղբը տեղափոխելու համար),

բ. սահմանել <<լավագույն փողոց>>, <<լավագույն բակ>>, <<լավագույն դպրոց>>, <<լավագույն թաղամաս>>, <<լավագույն հիմնարկ>> և այլ մրցանակներ,

գ. միաժամանակ բոլոր սուբյեկտներին պարզաբանել և տեղեկացնել այն մասին, որ իրենք պարտավոր են պատշաճ կերպով ապահովել իրենց պատկանող և հարակից տարածքների սանիտարական մաքրությունը, բարեկարգումը և գիշերային լուսավորությունը:

2. Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին՝

Համայնքի բյուջեից հատկացնել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ վերոգրյալ աշխատանքների կազմակերպման կապակցությամբ պահանջվող ծախսերի ապահովման համար:

3. Աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանին՝

Քաղաքի աղբահանության, սանիտարական մաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների կազմակերպման և անցկացման ծրագիր- ժամանակացույցը ներկայացնել ավագանու անդամներին՝ միջոցառումներին ակտիվ մասնակցություն և գործնական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Կողմ (20)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ա.Ադամյան_____		
Գ.Ադամյան_____		
Ա.Բաղրամյան_____		
Լ.Բարսեղյան _____		
Մ.Գաբոյան_____		
Ա.Գրիգորյան _____		
Վ.Եդիգարյան _____		
Գ.Թաթարյան _____		
Հ.Խաչատրյան _____		
Հ.Կարապետյան _____		
Տ.Հովհաննիսյան _____		
Վ.Հունանյան _____		
Ն.Մեսրոպյան _____		
Ռ.Մխիթարյան _____		
Է.Մկրտչյան _____		
Վ.Շիրինյան _____		
Ե.Պողոսյան _____		
Մ.Սահակյան _____		
Ա.Վարդանյան _____		
Տ.Փանոսյան _____		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**